

հորիզոնական առանցքին Քրիստոսի մարմինն է (ոտքերն ու ձեռքերը ներքեւ կախած) ու Աստուածամօր ոտքերը որոնք կազմում են ուղղանկիւնի: Եռամաս այս հատուածների ուրուագիծը ներառնում է եկեղեցու գմբերի մի պատկեր, որի ուղղանկիւն թմբուկի վրայ բարձրանում է կոնածեւ վեղարը և խաչին փոխարինող տիրագունդը: Հստ քրիստոնէական աշխարհայեցողութեան, Աստուածամայրը այլարանական իմաստով ներկայացնում է Եկեղեցին: Այս գաղափարի գեղանկար-

չական մարմնաւորումն իր արտայայտութիւնն է գույլ «Աստուածամօր եօթ վերքը» նկարում:

Այսպիսով, Հայաստանի Ազգային պատկերասրահում պահուող «Աստուածամօր եօթ վերքը» կտաւը 17րդ դարի հայ եկեղեցական գեղանկարչութեան առաւել ինքնատիպ ու խորախորհուրդ ստեղծագործութիւններից է:

ՔՆԱՐԻԿ ԱԽԵՏԻՍԵԱՆ
Հայաստանի Ազգային պատկերասրահ

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կար մարդ մը, որ համարձակեցաւ կոչ ուղղել Աստուածոյ, ըսելով. «Ո՛վ Տէր Աստուած, Հրդեհէ՛ թուփը, ինչպէս որ ըրիր Մովսէսի համար, եւ ես պիտի հետեւիմ քեզի: Փուլ բեր պարխապները, ինչպէս որ ըրիր Ցեսուի համար եւ ես պիտի մարտնչիմ: Խաղաղեցուր կոհակները, ինչպէս որ ըրիր Գալիլիայի ծովուն վրայ, եւ ես մտիկ պիտի ընեմ քեզի»:

Եւ մարդը երկա՞ր, երկա՞ր դեղերեցաւ մացառուտին մէջ, նատեցաւ պարխապներու առջեւ ու մնաց ալեկոծ ծովի ափին, սպասելով, որ Աստուած պատասխանէ:

Իսկ Աստուած լսեց մարդուն կոչը ու պատասխանեց: Հրդեհ դրկեց՝ ո՛չ մացառներու թուփ մը այրելու, այլ մարդոց սրտերը հրաշրելու համար, փուլ բերաւ՝ ոչ թէ քարէ պարխապներ, այլ մեղքի ու անտարբերութեան պատեր, խաղաղեցուց՝ ոչ թէ ծովեր, այլ փոթորկայոց հոգիներ: Եւ սպասեց, որ մարդը պատասխանէ: Շատ երկա՞ր սպասեց:

Եւ որովհետեւ մարդը կը փնտուէր բոցավառող թուփեր՝ եւ ո՛չ սիրտեր, կը նայէր քարերու՝ եւ ո՛չ կեանքերու, կը դիտէր ծովեր՝ եւ ո՛չ հողիներ, եզրակացուց, թէ Աստուած անզօր է: Ուստի, վեր բարձրացուց զլուխը ու ըսաւ. «Ո՛վ Աստուած, միթէ կորսնցուցա՞ծ ես Քու ուժդ»:

Եւ Աստուած պատասխանէց. «Իսկ դո՞ւն, միթէ կորսնցուցա՞ծ ե՞ն տեսողութիւնդ»: